# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 105-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 06-ը օգոստոսի 2025 թվականի թիվ 10 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 06-ը օգոստոսի 2025 թվականի թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանին, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանին, ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք, Եղեգնաձոր և Եղեգիս համայնքի ավագանիներին ուղերձ հղելու մասին:

3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելուն համաձայնություն տալու մասին:

4. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների և իրավաբանականան անձի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,002հա բնակավայրերի նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 106-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԿՈԼՅԱ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ, ԵՂԵԳՆԱՁՈՐ ԵՎ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՒՂԵՐՁ ՀՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Վայոց Ձորի մարզում ծանր մետաղական հանքերի շահագործումը արգելելու նպատակով ընդունել Ուղերձ և հղել ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանին, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանին, ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք, Եղեգնաձոր և Եղեգիս համայնքների ավագանու անդամներին՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանին**

**ՀՀ ԱԺ Նախագահ Ալեն Սիմոնյանին**

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանին**

**Եղեգնաձոր, Եղեգիս, Վայք համայնքների ավագանու անդամներին**

**ՈՒՂԵՐՁ**

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ավագանին իր մտահոգությունն ու դիրքորոշումն է հայտնում Վայոց ձորի մարզում ծանր մետաղական հանքերի հնարավոր բացման վերաբերյալ: Մենք համոզված ենք, որ նման գործունեությունը ոչ միայն վտանգում է շրջակա միջավայրը և բնակչության առողջությունը, այլև կործանարար հետևանքներ կունենա ՀՀ կառավարության կողմից առաջնահերթ համարվող զբոսաշրջության, գինեգործության և գյուղատնտեսության զարգացման համար:

Վայոց ձորը, և հատկապես Արենին, Ջերմուկն ու Եղեգիսը, ընդգրկված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնված զբոսաշրջային կլաստերների զարգացման ծրագրում: Սա հնարավորություն է ստեղծում մեր մարզի համար դառնալ Հայաստանի այցեքարտը՝ գինու, առողջարանային, մշակութային և էկո զբոսաշրջության ուղղություններով: Զբոսաշրջությունը համարվում է տնտեսության այն ճյուղը, որը կարող է դառնալ մեր երկրի զարգացման շոգեքարշը, ինչպես բազմիցս նշում են ՀՀ կառավարության տարբեր պատասխանատու կառույցներ, ստեղծել հազարավոր աշխատատեղեր, խթանել տեղական արտադրությունը և ապահովել կայուն ու երկարաժամկետ եկամուտներ:

Վայոց ձորի մարզն արդեն իսկ ունի միջազգային ճանաչում՝ որպես գինու օրրան: Ինչպես Արենիում, այնպես էլ Վայոց ձորի տարբեր համայնքներում վերջին տարիներին կատարվել են հսկայական և մեծածավալ ներդրումներ, հիմնվել բազմահեկտար այգիներ՝ գյուղատնտեսության, զբոսաշրջության և գինեգործության զարգացումն ապահովելու համար: Այս ներդրումները ներգրավում են ոչ միայն տեղական, այլև միջազգային գործընկերներ, ստեղծում են նոր աշխատատեղեր և ապահովում գյուղատնտեսության ու զբոսաշրջության բնական կապը:

Ավելին, զբոսաշրջությունը միաժամանակ զարգացնում և բարելավում է տնտեսության մի քանի ուղղություններ միաժամանակ.

- խթանում է հյուրատնային և ծառայությունների մատուցման զարգացումը,
- նպաստում է ենթակառուցվածքների՝ ճանապարհների, կապի ու տրանսպորտի բարելավմանը,
- խթանում է գյուղատնտեսությունը՝ որպես զբոսաշրջության անմիջական մաս,
- պահպանում ու զարգացնում է շրջակա միջավայրը՝ ստեղծելով էկոտուրիզմի հնարավորություններ:

Մինչդեռ հանքարդյունաբերությունը մեր մարզում լրջագույն վտանգ է ստեղծում այս հեռանկարների համար: Ներկայում նախատեսվում է շահագործել մի շարք ծանր

մետաղական հանքեր, որոնք նախատեսում են ցիանիդի և այլ վտանգավոր նյութերի կիրառություն, ինչը կարող է անդառնալիորեն վնասել Վայոց ձորի մաքուր ջրերը, հողը և օդը: Հաշվի առնելով մեր մարզի փոքր չափերը և էկոհամակարգերի խոցելիությունը՝ ցանկացած նման աղտոտում անհնարին կդարձնի զբոսաշրջության զարգացումը:

Պարզ ասած՝ զբոսաշրջիկը չի գա մի մարզ, որտեղ բացվում են հանքեր: Ոչ մի այցելու չի ցանկանա հանգստանալ, գինի համտեսել կամ բնությունը վայելել այն տարածքում, որտեղ գործում են ցիանիդով և ծանր մետաղներով հանքեր: Սա անընդունելի է նաև Արենիի ու Վայոց ձորի բնակիչների համար, որոնց հիմնական եկամուտը գալիս է գինեգործությունից, գյուղատնտեսությունից և զբոսաշրջությունից:

Այսօր Վայոց ձորը կանգնած է ռազմավարական ընտրության առջև.

- Կամ ընտրում ենք կարճաժամկետ հանքարդյունաբերությունը՝ լրջագույն ռիսկերով բնության և մարդկանց կյանքի համար,
- Կամ՝ երկարաժամկետ ու կայուն զարգացումը՝ հիմնված զբոսաշրջության, գինեգործության և գյուղատնտեսության վրա:

Մենք համոզված ենք, որ Արենիի և Վայոց ձորի ապագան հանքերում չէ, այլ կայուն զբոսաշրջության, բարձրորակ գինեգործության և գյուղատնտեսության մեջ:

Խնդրում ենք ձեզ դադարեցնել Վայոց ձորի մարզում ծանր մետաղական հանքերի բացման գործընթացները և աջակցել այն ուղուն, որը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական զարգացման ռազմավարությանը՝ մեր երկիրը դարձնելով անվտանգ և գրավիչ զբոսաշրջային ուղղություն: Միաժամանակ ՀՀ Ազգային ժողովում քննարկման դնել օրենսդրական մակարդակով ծանր մետաղական հանքերի բացման հարցը, նախաձեռնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ, որոնք կսահմանափակեն և կկանոնակարգեն հանքարդյունաբերության գործունեությունը՝ ապահովելով մեր երկրի գյուղատնտեսության, գինեգործության, զբոսաշրջության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Եղեգիս, Եղեգնաձոր և Վայք համայնքների ավագանու անդամներ, խնդրում և կոչ ենք անում ձեզ ձեռնպահ մնալ աջակցելու, հաստատելու կամ թույլտվություն տալու Վայոց ձորի մարզում ծանր մետաղական հանքերի շահագործման ծրագրերին, փոխարենը չնաշխարհիկ տարածքներում մշակել այլ ծրագրեր, որոնք օգուտ կբերեն ՄԱՐԴՈՒՆ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 107-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատելու և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**Հավելված 1**

Արենի համայնքի ավագանու 06.08.2025թ.
թիվ 107-Ա որոշման

| Հ/Հ | Գտնվելու վայրը ֆ հասցեն | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Ծածկագիրը | Մակերեսը (հա) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ելփին | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 10-020-0109-0180 | 0.10352 |
| 2 | Արփի | գյուղատնտեսական | վարելահող | 10-012-0155-0032 | 0.32245 |

Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 108-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին մասի 3-րդ, 9-րդ և 12-րդ կետերը՝ Արենի համայնքի ավագանին

***որոշում է.***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, «Ռիմոութ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 0.58751 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0184-0113, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հանգստի և հանրային սննդի համար նախատեսված գոտի կառուցելու նպատակով:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Գարեգին Սիրասի Գրիգորյանի սեփականություն հանդիսացող 0.13 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0184-0005, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական

նշանակության՝ հանգստի և հանրային սննդի համար նախատեսված գոտի կառուցելու նպատակով:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Գարեգին Սիրասի Գրիգորյանի սեփականություն հանդիսացող 0.057 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0184-0006, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հանգստի և հանրային սննդի համար նախատեսված գոտի կառուցելու նպատակով:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Հովիկ Միքայելյանին սեփականություն հանդիսացող 0.0435 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0110-0031, հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 109-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,002ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ կառավարության 12 ապրիլի 2001թվականի թիվ 286-Ն որոշման IV.I գլխի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, ՀԷՑ ՓԲԸ-ի տնօրենի դիմումը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,002հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ '10-008-0041-0016-ից, գործառնական նշանակությունը՝ այլ հողերի) ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 24420 ՀՀ դրամ արժեքով, օտարել <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին՝ Արենի բնակավայրում կառուցված մանկապարտեզի էլեկտրամատակարարումը պատշաճ իրականացնելու և նոր ենթակայան տեղադրելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**